Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

арт-к 1595
281.6
Ն-93
4032
1595
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

# ՀԱՇԻՒ

## ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ

ՆՈՐԱՇԷՆՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԹԻՖԼԻԶՈՒ

ՎԱՍՆ 1881 և 1882 ԱՄԱՑ

ПЕЧАТЬ АЗИАТСКАГО МУЗЕУМА
SIG. MUS. ASIAT. C. A. 1818
281.6
Ն-93

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
1883

[library stamp, partly legible]

Համառօտ հաշուէցուցակ քաղեալ ի ժապաւինեալ մատենէ մտից և ծախուց Նորաշէնու Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ վասն 1881 ամի։

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Գումար գանձանակագրամոց յնթացս 12 ամսոց . | 81 | 43 |
| 2 | Լուսագինք մկրտութեանց, պսակաց և քառասնից պատարագաց . . . . . . . | 22 | 95 |
| 3 | Նուէրք հանելոյ գլխաչն 'ի ջրոյն . . . . | 9 | — |
| 4 | Վարձ ջահից աշտանակաց և ստոլի . . . | 40 | 50 |
| 5 | Ցընթացս տարւոյս վաճառեալ են մոմք . . . | 719 | 30 |
| 6 | Կէս մասն նուիրագրամք իւղաբերից կերոնաց . . | 30 | — |
| 7 | Վարձ միոյ տարւոյ կալուածոց մասամբ ընծայելոց յԻզմիրեանցէ . . . . . . . | 1100 | ›4 |
| 8 | Վարձ կրպակի աւագ պահարանի մոմավաճառութեան | 60 | — |
| 9 | Վարձ սենեկաց ներքնայարկի ուսումնարանի . . | 91 | 60 |
| 10 | Տոկոսիք ստացեալ 'ի Պրիկազէն . . . . | 341 | — |
| 11 | Ցընթացս տարւոյս վաճառեցան կիսայրեալ մոմք . | 60 | 5 |
| 12 | Մասն ինչ կտակեալ հանգուցեալ 'ի Գրիգորէ Շէրգիլեանց . . . . . . . . | 19 | 32 |
| 13 | Տոկոսիք հատուցեալ յերեցփոխանէ պարոն Ստեփան-Նոսի Ստեփանեանցէ վասն 6 ամսոց 642 և 93½ կոպ առ 100 9% . . . . . . | 29 | — |
| | Բոլոր գումարն է | 2604 | 19 |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

ա. Անցեալ ամաց մնացեալ անվաճառ կիսայրեաց մոմք, որք գտանէին 'ի խորանի եկեղեցւոյ, վաճառեցան 'ի վերայ աւագ պահարանի մոմավաճառութեան յիսուն ռուբլեաց (50 Ռ.), որք մուծեալ են 'ի շարս մտից ընդ յօդ. 146։

բ. Երկուց բիլեթից պրիկազի եկեղեցական մայր գումարն ստացեալ եղև 'ի պետս վճարելոյ զպարտս պրիկազին վասն կալուածոց Իզմիրեանցի վեց հազար եօթ հարիւր յիսուն երկու ռուբլի (6752 Ռ.) գումար։ մտից, մայր գումարաց և գնոց կեսայր մոմոց է ընդ ամենն (9406 ռ. 19 կոպ.) ինն հազար չորս հարիւր վեց ռուբլի տասն և ինն կոպէկ։ Երեսփոխան Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆ.

2010



Համառօտ քաղուածք 'ի նոյն մատենէ վասն ծախուց կամ այլոց ելից նոյն եկեղեցւոյ, և նոյնպէս վճարումն պարտուց պրիկազի ապառկաց և բոլոր միանուագ պարտուց, վասն 1881, 1882, 1883 1884 և 1885 ամաց։

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Ածուխ և մանրամասն ծախք վասն զանազան հարկաւորութեանց եկեղեցւոյ . . . . . | 74 | 99 |
| 2 | Հատուցաւ գործակալ Կարապետ քահանայի Տէր-Սարգսեանց վասն զանազան հարկաւորութեանց, պահանջելոց 'ի Կոնսիստորէ . . . . . | 60 | — |
| 3 | Գնեցան մոմք յԱւագ պահարանէ մոմավաճառութեան . . . . . . . . | 288 | — |
| 4 | Հատուցաւ տասանորդ ժամակոչին վասն նմա վաճառեալ մոմոց . . . . . . | 46 | — |
| 5 | Ցատուցաւ ռոճիկ սոյն ժամակոչին տարեկան . | 60 | — |
| 6 | Հատուցաւ ռոճիկ լուսարարի տարեկան . . . | 60 | — |
| 7 | Հատուցաւ սուրբ Մարիամեան օրիորդական ուսումնարանին . . . . . . . | 840 | — |
| 8 | Գնեցան իւղաբերեց կերոնք և մոմք վասն Աւետարանի | 19 | 65 |
| 9 | Պատրաստեցան նոր փակեղք վասն դրանց եկեղեցւոյ | 10 | — |
| 10 | Գնեցան մի ատենի ժամագիրք և մի տաղարան . | 3 | 50 |
| 11 | Վասն մաքրելոյ հինգ ջահից և աշտանակաց . . | 10 | — |
| 12 | Հատուցաւ վասն թաղման օտարական քահանայի, օգնականի գործակալի Գէորգ քահանայ Արուլեանցի | 5 | — |
| 13 | Հատուցաւ հարկ քաղաքական վասն կալուածոց մասամբ ընծայելոց յԻզմիրեանցէ . . . . | 40 | 57 |
| 14 | Հատուցան Ապահովագրամք (պրեմիայ) վասն սոյն կալուածոցն . . . . . . . | 74 | 10 |
| 15 | Վասն վերանորոգութեան և ներկելոյ ուսումնարանի եղեն ծախք . . . . . . | 158 | 45 |
| 16 | Պատրաստեցան բազպանք, փորուրար և այլն . | 11 | 90 |
| 17 | Հատուցան ապահովագրամք (պրեմիա տան ուսումնարանին) . . . . . . | 35 | 35 |
| | 17 յօդուածոյ գումարն է | 1797 | 51 |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

| | | | |
|---|---|---|---|
| ա. | Հատուցան Պրիկազին ապառիկ մնացեալ պարտք վասն 1880 և 1881 ամաց ց20ն Մայիսի 1881 ամի | 3051 | 30 |

Ե 200

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| բ. | Մնացեալ չորից ամաց պարտք նոյն պրիկազի, այն է վասն 1882, 1883, 1884 և 1885 միանուագ հատուցան ընդ ամենն . . . . . . . | 4643 | — |
| | 19 յօդուածի գումարն է | 9491 | 81 |

Երեսփոխան Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆ

## Համառօտ հաշուէցուցակ քաղեալ 'ի ժապաւինեալ մատենէ մտից և ծախուց ՆՈՐԱՇԷՆՈՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ վասն 1882 ամի։

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Գումար գանձանակադրամոց յընթացս 12 ամսոց . | 71 | 91 |
| 2 | Լուսագինք մկրտութեանց, պսակաց և քառասնից պատարագաց . . . . . . . | 17 | — |
| 3 | Նուէրք հանելոյ գխաչն 'ի ջրոյն . . . . | 6 | — |
| 4 | Վարձ ջահից, աշտանակաց և ստոլի . . . | 21 | — |
| 5 | Ցընթացս տարւոյս վաճառեալ են մոմք . . . | 712 | 63 |
| 6 | Նոյնպէս վաճառեալ են կիսայրեաց մոմք . . | 40 | 55 |
| 7 | Կէս մասն նուիրադրամոց իւղաբերից կերոնաց . | 17 | 50 |
| 8 | Միամեայ վարձ կալուածոց մասամբ յընծայելոյ յԻզմիրեանցէ . . . . . . . . | 1200 | — |
| 9 | Վարձ կրպակի աւագ պահարանի մոմավաճառութեան | 60 | — |
| 10 | Վարձ սենեկաց ներքնայարկի ուսումնարանի . . | 51 | 80 |
| 11 | Նուէրք 'ի բացմանէ վարագուրի . . . . | 5 | — |
| 12 | Մասն ինչ կտակեալ 'ի հանգուցեալ Գրիգորէ Շերգիլեանց . . . . . . . . | 19 | 31 |
| 13 | Տոկոսիք հատուցեալք յերեցփոխան պարոն Ստեփաննոսի Ստեփանեանցէ գտանեցեալ առ նմա առձեռննպատրաստի դրամոց 152 ռ. և 18 կոպ. մի ամեայ առ 100 9% . . . . . . . . | 13 | 70 |
| | Բոլոր գումարն է . . | 2236 | 40 |

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

50406-կր

'Ի բաց հանեալ յ712 ռ. 63 կոպեկաց, որք են վաճառք' յընթացս տարւոյս, մոմոց, զ281 ռ. 95 կոպ., որքեն գինք' գնեալ յաւագ պահարանէն, մոմոց մնայ զուտ վաստակն 430 ռ. 68 կոպ. Ուրեմն վաստակն կրկնապատիկ է. այն է' մի ռուբլուն' մի ռուբլի և 50% աւելորդ' 148 ռ. 73 կոպ.

Երեսփոխան Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

ՀՍՍՀ-Арм.ССР им. А. Мясникяна
36157-61



## Համառօտ քաղուածք 'ի նոյն ժապաւինեալ մատենէ վասն ծախուց 1882 ամի։

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Ածուխ և մանրամասն ծախք զանազան հարկաւորութեանց եկեղեցւոյ . . . . . . | 54 | 55 |
| 2 | Հատուցաւ գործակալ Կարապետ քահանայի Տէր-Սարգսեանց վասն զանազան հարկաւորութեանց, պահանջելոց 'ի Կոնսիստորեայէ . . . . | 60 | — |
| 3 | Գնեցան յԱւագ պահարանէ մոմավաճառութեան մոմք . . . . . . . . | 376 | 40 |
| 4 | Գնեցան իւղաբերից կերոնք և մոմք վասն Աւետարանի | 15 | 50 |
| 5 | Հատուցաւ տասանորդ ժամակոչի վասն նովաւ վաճառեալ մոմոց . . . . . . | 45 | 5 |
| 6 | Հատուցաւ ռոճիկ սոյն ժամակոչի տարեկան . . | 60 | — |
| 7 | Հատուցաւ ռոճիկ լուսարարի տարեկան . . . | 60 | — |
| 8 | Եղեն ծախք 'ի վերայ սալայատակի և զանգակատան առաստաղի եկեղեցւոյ . . . . . . | 27 | 15 |
| 9 | Եղեն ծախք 'ի վերայ միոյ սենեակին վասն բնակութեան ժամակոչի . . . . . . | 48 | 55 |
| 10 | Հատուցան ապահովագրամք (պրէմիա) տան ուսումնարանին . . . . . . . . | 45 | 10 |
| 11 | Հատուցան ապահովագրամք կալուածոց մասամբ ընծայեալ Իզմիրեանցի . . . . . . | 69 | 10 |
| 12 | Հատուցան հարկ քաղաքական վասն նոյն կալուածոյ | 39 | 99 |
| 13 | Գնեցան $5^1/_2$ արշին զառ փարչայ վասն դիազարդի և այլ զանազան իրեղէնք 'ի պէտս եկեղեցւոյ . | 29 | 40 |
| 14 | Հատուցաւ տարեկան վճար Սուրբ Մարիամեան օրիորդական ուսումնարանին . . . . . | 1440 | — |
| | 14 յօդուածոց գումարն է | 2370 | 79 |

ИНСТИТ... Академ... ССР

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

ա. 'Ի Վերյիշեալ ընդ 3-որդ յօդ. նշանակեալ 376 ռուբլեաց 40 կոպէկաց' գնոց գնեալ յԱւագ պահարանէ, մոմոց գոն այժմ անվաճառ մնացեալ առ 1-ն յունվարի 1883 ամի, 94 ռուբլոյ 45 կոպէկի արժողութեամբ մոմք, որք մուծեալ են 'ի շարս մտից ընդ 148 յօդ. ըստ որում վաճառեալ մոմոց գինքն են 282 ռ. 95 կոպ.

բ. Գոն ևս անվաճառ կիսայրեաց մոմքն 35 փունտ սպիտակ և 7 փունտ դեղին, որք մուծեալ են 'ի շարս

մտից ժապաւինեալ մատենի ընդ յոգ. 149՝ որոց գինքն են 9 ռ. 80 կոպ.:

Յընթացս տարւոյս մուտք եղեալ են 2236 ռ. 40 կ. ծախքն է 2370 ռ. 79 կ.: Զմուտս հանելով 'ի ծախուց գումարէն՝ մնայ 134 ռ. 39 կոպ. պարտք՝ 'ի հաշիւ որոց գոն անվաճառ մոմք ամբողջ և կիսայրեաց ընդամէնն 104 ռ. 25 կոպ. 'ի վերոյ գրեալ 134 ռ. 39 կ. պարտուց հանելով զ 104 ռ. 25 կոպ. մոմագինս, մնայ պակասորդ (դեֆիցիտ.) 30 ռ. 14 կոպէկ.

Երեսփոխան Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ



# Հ Ա Շ Ի Ւ

Եկամտից 'ի Կալուածոց մասամբ իւիք նուիրելոց 'ի պ. Գրիգորէ Իզմիրեանց, յօգուտ Սուրբ Մարիամեան օրիորդական ուսումնարանի Նորաշէնու եկեղեցւոյ Տփխիսայ, սկսեալ 'ի 1877 ամէ

Ռուբ. Կոպ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Դրամագլուխ | 196 | 83 |
| 1 | 1877 | 1 | էն Յուլիսի մինչև 1878 31-ն Յուլիսի. . . | 6% տոկոս | 11 | 81 |
| | | | | դրամագլուխ | 328 | 5 |
| | | | | | 536 | 69 |
| 2 | 1878 | — | — 1879 — | % | 32 | 20 |
| | | | | դրամագլուխ | 924 | 21 |
| | | | | | 1493 | 10 |
| 3 | 1879 | — | — 1880 — | % | 89 | 59 |
| | | | | դրամագլուխ | 1100 | 4 |
| | | | | | 2682 | 73 |
| 4 | 1880 | — | — 1881 — | % | 160 | 96 |
| | | | | դրամագլուխ | 1100 | 4 |
| | | | | | 3943 | 73 |
| 5 | 1881 | — | — 1882 — | % | 236 | 62 |
| | | | | դրամագլուխ | 1200 | — |
| | | | | | 5380 | 35 |
| | | | Առ 1 ն Յունվարի 1883 ամի դրամագլխի և տոկոսեաց տոկոսօք եղև ընդամէնի գումարն այսքան. . . . | % | 322 | 82 |
| | | | | | 5703 ռ. | 17 կ. |
| | | | Երեսփոխան Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆ | | | |

# Հ Ա Շ Ի Ւ

Դրամագլխոց Նորաշէնու եկեղեցւոյ Տփխիսայ, և տոկոսեաց նոցին, սկսեալ 'ի 1879 ամէ ց1-ն յունվարի 1883 ամի։ Այլեւս վճարման պարտուց կալուածոց Իզմիրեանցի պրիկազին, հատուցման քաղաքական հարկաց, ապահովադրամոց, (պրէմիա) և այլոց ծախուց, արարելոց վասն հաստատելոյ զկալուածագիրն և այլն։

Ռուբ. Կ.

| | | | | | | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1879 | 5 | էն Մարտի | առ յ2-ն Յուլիսի | դրամագլ. | 1779 | 75 |
| | | | | 1 տարի 3 ամիս 26 օր | տոկոս 6% | 141 | 22 |
| 2 | 1880 | — | — — | | դրամագլ. | 176 | 10 |
| | | | | | տոկոս մի օր | — | 4 |
| 3 | 1880 | 1 | էն Յուլիսի | յ3-ն նոյն ամսոյ 176ռ.104 | | 2097 | 11 |
| 4 | 1880 | 2 | էն Յուլիսի | ց3-ն Սեպտ. 1880 ամի | դրամագլ. | 907 | 70 |
| | | | | | | 3004 | 81 |
| | | | 3004 ռ. 81 կոպ. | 2 ամիս 1 օր. | տոկոս % | 30 | 55 |
| 5 | 1880 | 3 | էն Սեպտ. | ց19 Յունվարի 1881 | դրամագլ. | 955 | 13 |
| | | | | | | 3990 | 49 |
| | | | 3990 ռ. 49 կոպ. | 4 ամիս 15 օր. | տոկոս % | 89 | 79 |
| 6 | 1881 | 19 | էն Յունվարի | ց20-ն Մայիսի 1881 | դրամագլ | 1687 | 62 |
| | | | | | | 5767 | 90 |
| | | | 5767 ռ. 90 կոպ. | 4 ամիս եւ 1 օր | տոկոս % | 116 | 32 |
| 7 | 1881 | 20 | էն Մայիսի | ց7-ն Հոկտեմբերի 1881 | դրամագլ. | 1480 | 35 |
| | | | | | | 7364 | 57 |
| | | | 7364 ռ. 57 կոպ. | 4 ամիս եւ 16 օր. | տոկոս % | 166 | 94 |
| 8 | 1881 | 7 | Հոկտ. | առ 1-ն Յունվարի 1883 | դրամագլ. | 4643 | — |
| | | | | | | 12174 | 51 |
| | | | 12 174 ռ. 51 կոպ. | I տարի 2 ամիս եւ 23օր | տոկոս % | 898 | 90 |
| | | | Այսինքն առ 1-ն | Յունվարի 1883 ամի | | 13073 | 41 |
| | | | 'ի վերոյիշեալ 13. | 073 ռ. 41 կոպ. ծա- | | | |
| | | | խուց հանեալ եկա | մուտս մնայ 7370ռ.244 | | 5703 ռ. | 17 կ. |
| | | | Երեսփոխան | Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ | | | |



# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

1) Նորաշէնի Սուրբ Աստուածածնայ եկեղեցին պարտաւոր էր ութ տարուայ ընթացքում հատուցանել այն 11029 ռուբլի գումար պարտքը, որ մնացած էր պ. Իզմիրեանցի դոյն այդ եկեղեցուն մասամբ իւրք նուիրած կալուածքից։ Այս գումարի վերայ մինչեւ պարտքի վճարելը բարդվում էր զանազան ծախքեր մօտաւորապէս մինչեւ 1000 ռուբլի, 'ի միասին վճարելի գումարն էր 12000 ռուբլի։

2) Վերոյիշեալ կալուածոց պարտքի վճարն իւր ծախքով եւ տոքոսիքով, նոյնպէս կալուածոց մուտքն իւր տոկոսիքով յիշեալ գումարից հանած, մնում է եկեղեցուն առ 1-ն Յունվարի ներկայ 1883 ամի 7370 ռ. 24 կոպ. ինչպէս երեւում է վճարած դրմագլխի եւ եկամուտից հաշուէցուցակից։

3) Այս գումարն եթէ 5% տոկոսիքով հաշուենք առ 100-ն, տարեկան օգուտ կարող էր բերել ընդ ամէնն 368 ռ. 50 կոպ.։ Ուրեմն եկեղեցական գումարի չնչին տոկոսիքը եւ կալուածոց պարտուց մեծ գումարի սակաւ առ սակաւ հատուցանելն անօգուտ եւ միանգամայն վնասակար դատեցաւ, եւ այս պատճառաւ մնացեալ պարտուց գումարը միանուագ հատուցաւ եկեղեցական դրամագլխից, որով՝ ա) ուսումնարանի գոյութիւնը եւ դրութիւնը բարւոքեցաւ. բ) եկեղեցին բոլորովին ազատուեցաւ պարտքից եւ ապահովուեցաւ. եւ գ) եկեղեցական դրամագլուխը չմտաւ ի գոգն Աբրահամու, ինչպէս մինչեւ ցայսօր պատահել է ուրիշ շատ եկեղեցապատկան գումարների հետ։ Այժմ Իզմիրեանցի կալուածքը բերում է տարեկան արդիւնք 1200 ռ. որը մեր հատուցած գումարի

տոկոսիքից եռապատիկ աւելի է եւ ժամանակով այս շինութիւնը ձրի կմնայ յօգուտ ուսումնարանի եւ եկեղեցուն։

4) Այս կալուածքը ձեռք բերելու համար իր ժամանակին երկար խորհրդակցուած է ժողովրդեան, հոգաբարձուաց եւ հաշուատեսաց հետ, եւ նոցա հաւանութեամբ միջնորդել ենք վիճակային կոնսիստորիային եւ Սենօդին սրբոյ Էջմիածնի, որոց հրամանաւ եւ բարձրագոյն Կառավարութեան թոյլտուութեամբ ստացուած է իւր ժամանակին լուծումը. իսկ այժմ չգիտեմ թէ՝ ինչ պատճառաւ եւ որպիսի հիման վերայ յանձնաժողովի հաշուատես անդամը այս կալուածքը եկեղեցւոյ տիրապետութեան ներքոյ ընդունելը սխալմունք համարեց եւ իւր ընկեր հաշուատեսների առաջ պարզապէս յայտնեց թէ՝ «խաբուած ենք», որպէս թէ հոգաբարձուները՝ հաշուատեսները եւ ժողովրդականները անհասկացող անձինք են եղած եւ ինքը միայն լաւ բանիմաց հաշուատես, թէ եւ ոչ հաշուագէտ։ Այս մասին մենք երկար խօսելու հարկաւորութիւն չունենք գիտենք միայն՝ որ ատելութեան կիրքը եւ չար նախանձը դեռ շատ բաներ կարող են թելադրել չարաչար զրպարտելու անմեղ մարդկանց. անկեղծօրէն խորհուրդ կտանք, որ յիշեալ հաշուատեսը չափաւորէ իւր սրտի գրգռուած կիրքը եւ ապա խոհեմութեամբ ցոյց տայ գործի էական սխալմունքը։ Մենք բարձրապատիւ հաշուատեսի այս գործում այսպէս վարվելն պարտք համարեցինք ներկայացնել բարեմիտ ընթերցողների աչալուրջ նկատողութեանը։ Թէպէտ հաշուատեսութեան ժամանակ կային նա եւ ուրիշ անտեղի պահանջներ որն որ այն մասին չենք կամենում ընթերցողների լսելիքը ձանձրացնել։



5) Վերոյգրեալ կալուածոց վերանորոգութեան համար ծախք եղեւ 200 ռ. որպիսին այլ եւս կարողէ կարեւորութիւն չունենալ վերանորոգելու տասն տարուայ աւելի ընթացքում, մինչդեռ լսվում էր զանազան անձինքներից՝ իբր թէ բարձրապատիւ հաշուատես հայրը հաւատացրել է շատ միամիտներին որ պ. Իզմիրեանի կալուածքի վերանորոգութեան համար ծախք հարկաւոր է երկու հազար ռուբլի։ Բայց մենք կասենք որ՝ արդարեւ, երկու հազար ռուբլին դեռ սակաւ պէտք է համարել, երբ այն կալուածոց վերանորոգութեան ծախքը տնտեսուի որ եւ իցէ անհարազատ եկեղեցական ծառայողի ձեռքով, ինչպէս որ օրինակներ շատ կան։

6) Արժանայիշատակ հանգուցեալ Սողոմոն Ղուզանեանցի նուիրած իւր սեպհական կալուածոց քարվանսարայի, Ջրաղացի եւ կրպակների քառորդ մասը, որ գտնվում է Գանձակում, եւ որի տարեկան արդիւնքը մինչեւ անցեալ մարտ ամսոյ 1-ն ստանումէր եկեղեցին 720 ռ. եւ ապա այս կալուածոց գետնից կտրուեցաւ երկու հարիւր քառակուսի սաժէն Բագու-Թիֆլիսեան երկաթուղու խճուղիաքարշ գիծը անցկացնելու համար, եւ այդ պատճառաւ առ այժմ արդիւնքը նուազեց եւ հասաւ 300 ռ. միեւնոյն ժամանակ այն օտարացած գետնից մեր եկեղեցւոյ բաժինը գնահատած է 750 ռ. որ պէտք է ստացուի միանուագ Յարութիւն Իւզբաշեանցից եւ Գանձակու երկսեռ դպրոցների հոգաբարձութենից։ Այնու ամենայնիւ չնայելով այժմեան սակաւաքանակ արդեանց, յուսալի է, որ ապագայում դարձեալ աճի նորա արդիւնքը։

7) Նորաշէն եկեղեցին վճարումէ եկեղեցական Սուրբ Մարիամեան օրիորդաց դպրոցին վերոյիշեալ կալուածնե-

եւ եկեղեցական արդիւնքներից տարեկան ընդ ամէնն 1440 ռուբլի գումար։

8) Ներկայումս Նորաշէնու սուրբ Աստուածածնայ եկեղեցին ունի անշարժ կալուածք ա) մի հոյակապ նորակառոյց շինութիւն, որ գտանվում է եկեղեցւոյ արեւմտեան կողմն, որոյ մէջ զետեղուած է Ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանը, ուր ուսանում են ձրի մինչեւ 150 չքաւորաց օրիորդներ։ բ) հանգուցեալ Սողոմոն Ղուզանեանցից կտակով ընծայած կալուածոց քառորդ մասը, որ գտանվում է Գանձակ քաղաքում եւ գ) մեծապատիւ իզմիրեանցից ընդունած կալուածքը, որ գտանվում է Տփխիսու 5-րդ քաղաքամասի Շիրաջխանայ կոչուած փողոցում։

Այս երից կալուածոց արժողութիւնը այժմ հասնում է 940,000 ռուբլի, որոնք ձեռք են բերուածիմ տաս տարուայ պաշտօնավարութեան ժամանակամիջոցում։

Տփխիսու բ. կարգի վաճառական՝

Երեսփոխան Ս. Սթէփանեան.

՚Ի 4-ն յուլիսի 1883 ամ.

Дозвол. ценз. 8 Іюля 1883 г. Тифлисъ

ՀՀ Ազգային գրադարան
NL0030716
4032